2006

Լրացուցիչ Ապահովության Եկամուտ

Իրավունքներ եւ Պատասխանատվություններ

Ի՞նչ Են Ձեր Իրավունքները

Դուք իրավունք ունեք.

- Անվճար դիմում ներկայացնելու նպաստներ ստանալու համար:
- Օգնություն ստանալու դիմումնագիրները լրացնելու եւ ապահովելու անհրաժեշտ փաստաթղթեր:
- Օգնական ունենալու Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դիմում ներկայացնելու եւ գրասենյակ այցելելու ընթացքում:
- Փաստաբան ունենալու, կամ ձեր կողմից ընտրյալ մի անձ, որ ձեզ ներկայացնի:
- Խնդրելու եւ ստանալու ձեր անձնական տեղեկությունների օրինակները:
- Նամակ ստանալու որտեղ բացատրվում է ձեր Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դիմումի արդիւնքը, նպաստի տեսակն ու գումարը:
- Բողոքարկելու ձեր Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դիմումնագրի եւ ամսական վճարման գումարի որոշումների մեծամասնությունը:
- Անվճար թարգմանչական օգնություն ստանալու եթե Անգլերեն լավ չեք խոսում:
- Սոցիալական Ապահովության գրասենյակի կողմից օգնություն ստանալու ապահովելու ձեր բժշկական տեղեկությունները:
- Պահանջելու եւ ստանալու օրինակներ այն օրէնքներին, կանոններին եւ պայմանագրություններուն որոնք գործածվել են ձեր դիմումի որոշման ընթացքում:

Ի՞նչ Են Ձեր Պատասխանատվությունները

Պետք է մեզ տեղյակ պահեք.

- Եթե տեղափոխվեք կամ ձեր հասցեն փոխեք:
- Եթե ընտանիքի մի անդամ տեղափոխվի կամ ընտանիքում մի նոր անդամ աւելանա:
- Եթե ձեր, ձեր կողակիցի, կամ ձեր ծնողքի եկամուտը կամ հասույթը փոխվի:
- Եթե ձեր, ձեր կողակիցի, կամ ձեր ծնողքի դրամական միջոցները փոխվեն:
- Եթե եկամուտ կամ առօրյա ծախսերի դրամական օգնություն ստանաք հարազատներից կամ ընկերներից:
- Եթե ձեր կողակիցը կամ ընտանիք մի այլ անդամներից մեկը մահանա:

- Եթե ամուսնանակ կամ ամուսնալուծվեք:
- Եթե ձեր անունը փոխեք:
- Եթե իրավասու լինեք ստանալու այլ տեսակի նպաստներ կամ վճարումներ:
- Եթե փոխադրվեք կամ արձակվեք հետեւյալ հաստատություններից՝ հիվանդանոց, ծերանոց կամ բանտ:
- Եթե Ամերիկայի Միացեալ Նահանգներից դուրս ճամբորդեք կամ ետ վերադառնաք:
- Եթե հրաման լինի ձեր ձերբակալության համար որովհետեվ փորձել եք որճրագործություն, կատարել եք որճրագործություն կամ մի այլ ծանր յանցնագործություն (որոնց պատիժնէ մեկ տարուց ավել բանտարկութուն կամ մահ):
- Եթե ազատ արձակվելու օրենքները չյարգելու պատճառով ձերբակալելության հրաման լինի ձեզ համար:
- Եթե փոփոխություն լինի դպրոց յաճախելու ծրագրի մեջ (եթե 22 տարեկանից երիտասարդ եք):
- Եթե հովանավոր ունեցող գաղթական եք եւ ձեր հովանավորի եկամուտը փոխվի:
- Եթե ստանում եք կուրության կամ հաշմանդամության նպաստ եւ ձեր առողջական վիճակը բարելավվի:
- Եթե ժամադրություն ունեք մեզ հետ սակայն չեք կարող գրասենյակ ներկայանալ:

Հիշեցումներ

- Պետք է տեղեկացնեք Սոցիալական Ապահովության գրասենյակը եթե ի վիճակի չեք ղեկավարելու ձեր դրամական հարցերը:
- Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Նախապես մեզ տեղյակ պահեք որպեսզի երբ այցելեք ձեր տեղական գրասենյակը հոն ներկայ լինի նաեւ թարգմանիչը: Հաւելյալ տեղեկության համար կարդացեք Թարգմանչական Ծառայություններ: (Այս հրատարակությունը Հայերեն լեզվով չկայ):
- Դուք եւ ձեր ներկայացուցիչը պարտաւոր եք մեզ ճշգրիտ տեղեկություններ տալու: Գիտակցաբար եւ կամեցողությամբ կեղծ տեղեկություն հայթայթելը օրենքի հակառակ է:
- Հաշմանդամության նպաստներ ստանալու դիմում ներկայացնելու ժամանակ պետք է հայթայթեք ձեր բժշկական լրիւ տեղեկությունները:
- Ընդհանրապես **60 օր** ունեք բողոքարկելու որեւէ մի որոշում:
- Նպաստառուի մահվան լուռը անմիջապես պետք է յայտնվի Սոցիալական Ապահովության գրասենյակի:

Կարեւոր ծանուցում. Այս տեղեկագիրը ընդհանուր կերպով բացատրում է Սոցիալական Ապահովության Եկամուտ ստացողների իրավունքներն ու պատասխանատվությունները, բայց չի ներառում օրենքի բոլոր կետերը: Եթե ունեք յատուկ հարցեր ձեր պարագայի վերաբերյալ, խնդրում ենք դիմել Սոցիալական Ապահովության գրասենյակ:

Հաւելյալ Տեղեկություն

Հաւելյալ տեղեկության համար, այցելեցեք որեւէ Սոցիալական Ապահովության գրասենյակ կամ զանգահարեք հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213**: Կարող եք զանգահարել առավոտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7: Երբ զանգահարեք, հաճեցեք ձեր մօտ ունենալ ձեր Սոցիալական Ապահովության համարը:

Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ, մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել **օրը 24 ժամ**, նոյնիսկ շաբաթավերջում եւ տօնական օրերին:

Եթէ թարգմանիչի պէտք ունեք ձեր գործերը կատարելու համար, հերախօսով կամ տեղական գրասենյակում, մենք ձեզ համար անվճար թարգմանիչ տրամադրում ենք:

Խուլերը եւ դժվար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778** առավոտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել, թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Կարող եք նաեւ այցելել մեր կայքէջը, www.socialsecurity.gov ստանալու հաւելյալ տեղեկություն Լրացուցիչ Ապահովության Եկամուտի եւ այլ նիւթերի մասին:

Այս տեղեկամնիրը ընդգրկում է ընդհանուր տեղեկություններ: Հաւելյալ տեղեկության համար զանգահարեք հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժվար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**), այցելեցեք տեղական Սոցիալական Ապահովության մնրասենյակը կամ մեր կայքէջը,

www.socialsecurity.gov/multilanguage/Armenian/armenian.htm